# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
## «ՋՐԱՌ» ՓԲԸ-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ (ԲԱԺՆԵՏԻՐՈՋ) ՈՐՈՇՄԱՆ

ք. Երևան

«26» «հունիսի» 2023թ.

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

| | |
|---|---|
| Գ. Սանոսյան | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար՝ «ՋՐԱՌ» ՓԲԸ-ի բաժնետոմսերի կառավարման լիազորություններն իրականացնող (100 %) ձայնի իրավունքով |
| Վ. Տերտերյան | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ |
| Ա. Երիցյան | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղար |
| Ա. Խաչատրյան | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ |
| Ա. Մանուկյան | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներդրումային ծրագրերի համակարգման, տնտեսագիտական վերլուծության և մոնիթորինգի վարչության պետ |
| Վ. Հայրապետյան | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներդրումային ծրագրերի համակարգման, տնտեսագիտական վերլուծության և մոնիթորինգի վարչության տնտեսագիտական վերլուծության բաժնի պետ |
| Ա. Ավագյան | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի գլխավոր իրավաբան, (ժողովի քարտուղար) |
| Ա. Աբգարյան | «ՋՐԱՌ» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն |

Ժողովի նախագահ Գ. Սանոսյան

Ժողովի քարտուղար Ա. Ավագյան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացում:
2. Ընկերության կանոնադրության փոփոխության հաստատում:

ՀԱՐՑ 1

Լսվեց Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման հարցը (տեղեկանքը կցվում է):

Զեկուցող՝ Ա. Աբգարյան

ՈՐՈՇՎԵՑ՝

1. Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 34-րդ, 35-րդ և 67-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 21-ի թիվ 590-Ն որոշումը.

1) Ավելացնել Ընկերության կանոնադրական կապիտալը 7,235,077.0 (յոթ միլիոն երկու հարյուր երեսունհինգ հազար յոթանասունյոթ) ՀՀ դրամ գումարի չափով:

2) Հաստատել Ընկերության կանոնադրական կապիտալը 37,005,557,245.3 (երեսունյոթ միլիարդ հինգ միլիոն հինգ հարյուր հիսունյոթ հազար երկու հարյուր քառասունհինգ ամբողջ երեք տասնորդական) ՀՀ դրամ, որը կազմում է 4,552,121 (չորս միլիոն հինգ հարյուր հիսուներկու հազար հարյուր քսանմեկ) (հասարակ) սովորական, անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը՝ 8129.3 (ութ հազար հարյուր քսանինը ամբողջ երեք տասնորդական) ՀՀ դրամ:

ՀԱՐՑ 2

Լսվեց՝ Ընկերության կանոնադրության փոփոխության հաստատման մասին հարցը:
Զեկուցող՝ Ա. Աբգարյան

ՈՐՈՇՎԵՑ՝

1. Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Ընկերության կանոնադրության 11.2 կետի «է» ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 21-ի թիվ 590-Ն որոշումը՝ հաստատել Ընկերության կանոնադրության 5.2 կետում կատարված փոփոխությունը (կցվում է):
2. «ՋՐԱՌ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 5.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5.2 Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 37,005,557,245.3 (երեսունյոթ միլիարդ հինգ միլիոն հինգ հարյուր հիսունյոթ հազար երկու հարյուր քառասունհինգ ամբողջ երեք տասնորդական) ՀՀ դրամ, որը կազմում է 4,552,121 (չորս միլիոն հինգ հարյուր հիսուներկու հազար հարյուր քսանմեկ) հատ (հասարակ) սովորական, անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը՝ 8129.3 (ութ հազար հարյուր քսանինը ամբողջ երեք տասնորդական) ՀՀ դրամ:

Բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են, պատկանում են Հայաստանի Հանրապետությանը, վճարված են նրա կողմից և կառավարվում են Հայաստանի Հանրապետության կառավարության և նրա լիազորած անձի՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի կողմից»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերության 2006 թվականին մայիսի 17-ի գրանցված կանոնադրության (ներառյալ դրանում կատարված բոլոր փոփոխությունները) բաղկացուցիչ մասը:

3. «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն պարոն Ա.Աբգարյանին.

սահմանված կարգով ապահովել «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխության գրանցումը ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

**ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ** **Գ. ՍԱՆՈՍՅԱՆ**

**ԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ** **Ա. ԱՎԱԳՅԱՆ**

# ՀԱՇՎԱՐԿ

ՀՀ կառավարության 21.04.2023թ. N 590-Ն որոշման հիման վրա կանոնադրական կապիտալի փոփոխության

| | | |
|---|---|---|
| 1 | Բաժնետոմսերի քանակ մինչև փոփոխությունը | 4,551,231 |
| | Անվանական արժեք | 8129.3 |
| | Կանոնադրական կապիտալ | 36,998,322,168.3 |

| | | | |
|---|---|---|---|
| 2 | Լրացուցիչ բաժնետոմսերի թողարկում և տեղաբաշխում համաձայն ՀՀ կառավարության 21.04.2023թ. N 590-Ն որոշման | | |
| | տեղաբաշխվող բաժնետոմսերի | քանակ | 890 |
| | | անվանական արժեք | 8129.3 |
| | | անվանական արժեքով գումար | 7,235,077.0 ՀՀ դրամ |
| | | էմիսիոն եկամուտ | 1281 ՀՀդրամ |
| | բաժնետոմսերի դիմաց վճարում | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի ձեռքբերմամբ | 7,236,358.0 ՀՀ դրամ |
| | Կանոնադրական կապիտալի ավելացում | բաժնետոմսերի քանակ | 890 |
| | | անվանական արժեք | 8129.3 |
| | | գումար | 7,235,077.0 ՀՀ դրամ |

| | | | |
|---|---|---|---|
| 3 | Կանոնադրական կապիտալը ավելացումից հետո | բաժնետոմսերի քանակ | **4,552,121 հատ** |
| | | անվանական արժեք | **8129.3** |
| | | գումար | **37,005,557,245.3** |

Տնօրեն Արտաշես Աբգարյան

Գլխավոր հաշվապահի ժ/պ Արտակ Արսենյան

Կազմված է 21 07 2023թ.
Բաղկացած է 2 թերթից
Տպագրված է ընդամենը 2 օրինակ

ՕՐԻՆԱԿ 1

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**

«Ջրառ» ՓԲԸ-ի
արտահերթ ընդհանուր ժողովի (Բաժնետիրոջ)
«26» հունիսի 2023թ. N 2 որոշմամբ
Տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարար

Գ. Սանոսյան

**ԳՐԱՆՑՎԱԾ Է**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 17.05.2006թ.
գրանցման համար՝ 222.120.00617
ՀՎՀՀ՝ 00093621
17.05.2006 թվականի գրանցված
կանոնադրության թիվ 001 3
փոփոխությունը գրանցված է Արդարադատության
նախարարության
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կողմից

Աշխատակից՝

«22» 08 2023թ.

# «ՋՐԱՌ»

# ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(փոփոխություն)

ԵՐԵՎԱՆ 2023թ.

Ընկերության կանոնադրության 5.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5.2 Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 37,005,557,245.3 (երեսունյոթ միլիարդ հինգ միլիոն հինգ հարյուր հիսունյոթ հազար երկու հարյուր քառասունհինգ ամբողջ երեք տասնորդական) ՀՀ դրամ, որը կազմում է 4,552,121 (չորս միլիոն հինգ հարյուր հիսուներկու հազար հարյուր քսանմեկ) հատ (հասարակ) սովորական, անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը՝ 8129.3 (ութ հազար հարյուր քսանինը ամբողջ երեք տասնորդական) ՀՀ դրամ:
Բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են, պատկանում են Հայաստանի Հանրապետությանը, վճարված են նրա կողմից և կառավարվում են Հայաստանի Հանրապետության կառավարության և նրա լիազորած անձի՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի կողմից»:
Սույն փոփոխությունը հանդիսանում է «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերության 2006 թվականին մայիսի 17-ի գրանցված կանոնադրության (ներառյալ դրանում կատարված բոլոր փոփոխությունները) անբաժանելի մասը:

Համաձայն եմ ծ/գ-ին:

Հ. Բաղդասարյան